ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 46-Ա

«05» հոկտեմբերի 2018 թվական

գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 133 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Քեթի բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում, Քեթի բնակավայրի տարածքում գտնվող, քաղաքացի՝ Գագիկ Մերուժանի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող 08-119-0138-0002 կադաստրային ծածկագրով 5.08365 հեկտար հողամասից (վկայական N 18032016-08-0004)

Scanned by TapScanner

առանձնացված 08-119-0137-0008 կադաստրային ծածկագրով 2.542851 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի կառուցապատված հողամասի (վկայական N 13072018-08-0023, հասցեն՝ Մարմաշեն համայնք, գյուղ Քեթի, փողոց 1, թիվ 1/3) նպատակային նշանակությունը փոխել և այն ընդգրկել բնակավայրերի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այդ հողամասում ինքնակամ կառուցված հասարակական նշանակության անավարտ շինություններն օրինականացնելու, հողամասի նպատակային և գործառնկան նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2. Համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին՝

1)ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան՝ մինչև փոփոխումը:

3)Ապահովել սույն որոշումից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

4)Հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ - 8	Դեմ - 0	Ձեռնպահ - 2
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՆՈՒԿ			
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ	√		
ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ	√		

Scanned by TapScanner

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ

ՂԱՖԱՐՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ

ՂԱՆԴԻԼՅԱՆ ԿԱՄՈ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«05» հոկտեմբերի 2018 թվական
գյուղ Մայիսյան

Scanned by TapScanner